[1] Դուրս գրման ամսաթիվ		
28	Հոկտեմբեր	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
28	Հոկտեմբեր	2019 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	3769438054

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր — Համար: Ամսաթիվ:
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապահ. հարկ	Այդ թվում՝ ավելաց. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68106919բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

28/10/2019 12:30:55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

20 սեպտեմբերի 2019թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Հ.Ալեքսանյանս, քննարկելով վարույթիս թիվ 68106919 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 23:50-ին, Գյումրի քաղաքի 231/517 տնակի բնակիչ Կարեն Ալբերտի Ասմարյանը 094-49-72-71 հեռախոսահամարից ահազանգ է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ և հայտնել, որ իր տնակից գողություն է կատարվել:

2019 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 00:30-ին, Կարեն Ալբերտի Ասմարյանը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2019 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 08:00-ից ժամը 23:30-ն ընկած ժամանակահատվածում, բացակայել է տանից, երբ վերադարձել է տուն, նկատել է, որ տնակի սանհանգույցի պատուհանը բաց է և տանից գողացվել է 40.000 ՀՀ դրամ: Մտածելով, որ գողությունը կատարել է Վարդանը, զանգահարել է վերջինիս 094-57-59-15 հեռախոսահամարին, ով ասել է, որ ինքն է գողացել, նշելով, որ լավ է արել, նախկին բողոքը հետ վերցնի, այլապես էլի կգողանա:

Դեպքի առթիվ 2019 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 68106919 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Կարեն Ասմարյանը ճանաչվել է տուժող և հարցաքննվել, որի ժամանակ ցուցմունք է տվել, որ Վարդանն իր ծանոթներից է, ում խնդրել է, որ իրեն օգնի իրերը վարձակալած թիվ 231/517 տնակ տեղափոխվելու հարցում, որից հետո՝ հաջորդ օրը, իր բնակված այդ բնակարանից գողություն է կատարվել, գողացվել է 100.000 ՀՀ դրամ, որի համար դիմել է ոստիկանության և պարզվել է, որ գողությունը կատարել է Վարդանը, ով մատնացույց է արել դեպքի վայրը և հայտարարել, որ իր տուն է մտել զուգարանի պատուհանից: 2019 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 08:00-ից 23:30-ն ընկած ժամանակահատվածում, բացակայել է տանից, իսկ տուն վերադառնալուց հայտնաբերել է, որ զուգարանի պատուհանի փեղկը հանված է, իսկ բնակարանից գողացվել է ընդհանուր 40.000 ՀՀ մետաղադրամներ, գողացված 40.000 ՀՀ դրամից 4.500 դրամը 10 և 20 մետաղադրամանոցներ են եղել, իսկ մնացած 35.500 ՀՀ դրամը 200 և 500 մետաղադրամանոցներ, որոնց կոնկրետ քանակը չի հիշում: Գողության կատարման մեջ կասկածել է նույն Վարդանին, քանի որ մինչ այդ՝ ժամը 19:00-ի սահմաններից, մոտ 6 անգամ 094-57-59-15, 077-77-63-32, 098-81-39-74 հեռախոսահամարներից զանգել է իր 094-49-72-71 հեռախոսահամարին և ասել, որ բողոքը հետ վերցնի: Ինքը նրան ասել է, որ բողոքը հետ չի վերցնի, նա էլ նշել է, որ ուրեմն նորից կշարունակի գողություն կատարել:

2019 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 08:40-ին, վերոնշված՝ Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց 231/517 տնակից գողությունը կատարելու կասկածանքով ՀՀ ոստիկանության ՇՄՎ Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին բերման է ենթարկվել Վարդան Սամվելի Գրիգորյանը: Վերջինս ներկայացվել է Շիրակի մարզային քննչական վարչություն՝ համապատասխան քննչական գործողություն կատարելու նպատակով:

Նույն օրը Վարդան Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին, և հարցաքննվել է որպես կասկածյալ, որի ժամանակ տվել է խոստովանական ցուցմունք, նշելով, որ 2019 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, ինքն ու Արմեն Գալոյանը դուրս են գրվել Գյումրու հոգեբուժարանից և գնացել են իրենց տուն սուրճ խմելու: Արմենն ասել է, որ իրեն փող է պետք, որի համար առաջարկել է գնան Կարեն Ասմարյանի տուն, որ վերցնի: Ժամը 20:00-ի սահմաններում գանցել են վերջինիս տուն, որտեղ մարդ չի եղել, Արմենը բարձրացել է այդ տան խորդանոցի տանիքը, որ այդտեղ գտնվող պատուհանից մտնի ներս, սակայն չի կարողացել, որի համար իջել է ու իրեն է ասել, որ մտնի: Ինքը

բարձրացել է նշված խորդանոցի տանիք, այդտեղի պատուհանի փեղկը ձեռքով հրել է, որն ընկել է ներս, որից հետո մտել է ներս և սենյակի դարակից վերցրել է մոտ 6.000 ՀՀ դրամի կարգի մետաղադրամներ ու նույն պատուհանից դուրս է եկել և ամբողջ գումարը տվել է Արմենին, որից հետո գնացել է տուն ու պառկել քնելու: Առավոտյան գողություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Կումայրիի բաժին, որտեղ էլ խոստովանել է կատարածը: Հայտնել է, որ կարող է մատնացույց անել Կարեն Ասմարյանի բնակարանի տեղը, ինչպես նաև այն դարակը, որտեղից կատարել է գողությունը:

Վարդան Գրիգորյանը հետագայում հրաժարվել է մատնացույց անել դեպքի վայրը: Հրաժարվել է նաև առերես հարցաքննվել Արմեն Գալոյանի և Կարեն Ասմարյանի հետ:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունից ստացված գրության համաձայն՝ Վարդան Սամվելի Գրիգորյանի մոտ ախտորոշվել է. «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, վարքային նշանակալի խանգարումներով»:

26.08.2019 թվականին Վարդան Սամվելի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով այն բանի համար, որ նա 2019 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 12:00-ից 20:00-ն ընկած ժամանակահատվածում, Կարեն Ալբերտի Ասմարյանի վարձակալած Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի 231/517 տնակից զգալի չափերով գույք գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, բարձրացել է նշված տնակին հարակից խորդանոցի տանիք, սանհանգույցի պատուհանի փեղկը հրելու և տեղահան անելու եղանակով, ապօրինի մուտք է գործել բնակարան ու այնտեղից գողացել է Կարեն Ասմարյանի զգալի չափերով գույքը՝ ընդհանուր արժեքով 40.000 ՀՀ մետաղադրամները:

Առաջադրված մեղադրանքում Վարդան Գրիգորյանն իրեն մեղավոր է ճանաչել, պնդել է, որ <<Կացինի> տանից կատարել է գողություն, գողացել է ոչ թե 40.000, այլ մոտ 6.000 ՀՀ դրամ: Օգտվելով իր դատավարական իրավունքից՝ հրաժարվել է ցուցմունքը շարունակելուց:

Նկատի ունենալով, որ Վարդան Սամվելի Գրիգորյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթիս թիվ 68106919 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին:

2.Փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ՝ Վարդան Սամվելի Գրիգորյանը նախկինում և վերը նկարագրված հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ և ե՞րբվանից,

բ/ եթե մեղադրյալ՝ Վարդան Սամվելի Գրիգորյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու, վերարտադրելու ընդունակությունից,

գ/ մեղադրյալ՝ Վարդան Սամվելի Գրիգորյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ՝ Վարդան Սամվելի Գրիգորյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ՝ Վարդան Սամվելի Գրիգորյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունա՞կ, թե՞ անմեղսունակ է,

զ/ մեղադրյա Վարդան Սամվելի Գրիգորյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը, ինչպես նաև հանրության համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ:

Է/ Վարդան Սամվելի Գրիգորյանն իր ներկայիս հոգեկան վիճակով կարո՞ղ է մասնակցել դատաքննչական գործողություններին, թե՞ ոչ և նրա տված ցուցմունքն արժանահավատ է արդյո՞ք:

- Պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասությունների մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. Հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

4. Փորձագետին տրամադրել Վարդան Սամվելի Գրիգորյանին և քրեական գործի նյութերը:

ՀԿԳ ավագ քննիչ՝ **Է.Հ.Ալեքսանյան**